Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաաություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9851

Բ Գ Կ Բ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ЗКСМ
К-68

ՀԱՅԿ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏ
1932

22 MAY 2013

24 SEP 2006
1 DEC 2009

ԲԳԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

3КСМ
4-68

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԹԱՐԳՄ. ԳՐԱԲԻՈՍ

ՀԱՅԿ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏ
1932

9851

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոմյերիտական ժողովներ . . . . . . . . . . 6
Միութենական լուսավորություն . . . . . . . 8
Օրինակելի աշխատանք . . . . . . . . . . 10
Աշխատանք թերթի հետ . . . . . . . . . . 11
Աշխատանք կոմյերիտական ակտիվի հետ . . . . . 13
Քաղպարապմունքներ . . . . . . . . . . 15
Ինչպես աշխատել . . . . . . . . . . 16

2. ԿՈՄՍՈՄՈԼՆ ՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ 18

Պայքարի փորձ բարձր կարգապահության համար . . . 19
Օրինակելի բջիջներ . . . . . . . . . . 21
Բարձրացնել պահանջկոտությունը . . . . . . . 23

3. ՊԱՅՔԱՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ . . 24

Կրակել լավ ու գերազանց . . . . . . . . .
Լավագույնների փորձը բոլոր բջիջներին . . . . . 25
Պահպանել տեխնիկան . . . . . . . . . . 27
Անվթար մեքենավարներ . . . . . . . . . . 28
Հարվածային վերանորոգում . . . . . . . . . 29
Տեխնիկական խմբակներ . . . . . . . . . . 30
Ռացիոնալիզատորական ու գյուտարարական աշխատանք . 31
Հաշվառման տետրեր . . . . . . . . . . 32
[illegible] . . . . . . . . . . . . »

---

*«Կոմունիստական յերիտասարդության միությունը պետք է լինի հարվածային խմբակ, վորը յուրաքանչյուր աշխատանքում ցույց է տալիս իր ոգնությունը, ցուցաբերում է իր նախաձեռնությունն ու սկսանքը»: (Լենին ՌԼԿՅԵՄ III համագումարում արտասանած ճառից):*

*«Պետք է, վոր յուրաքանչյուր կոմյերիտական—ակտիվիստ կապի իր առորյա աշխատանքը շինարարության բոլոր բնագավառներում սոցիալիստական հասարակության կառուցման հեռանկարի հետ: Պետք է, վոր նա կարողանա տանել իր առորյա աշխատանքն այդ հեռանկարի կենսագործման վոգով և ուղղությամբ»: (Ստալին, Պատասխաններ «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ի հարցերին):*

*«Բանակի կոմսոմոլը պետք է աշխատի այնպես, վոր չարունակ ու բոլոր ետապներում լինի մեր կուսակցական կազմակերպության ու մեր հրամանատարության հավատարիմ և ոգտակար ոգնականը՝ զորամասերի համախմբման, տեխնիկական ու քաղաքական ամրացման և մարտական պատրաստության գործում»: (Վորոշիլով. Համ. ԼԿՅԵՄ IX համագումարում արտասանած ճառից):*

Սույն բրոշյուրը ծառայում է վորպես գործնական ձեռնարկ գնդային ու վաշտային կոմյերիտական աշխատանքներում: Գրքույկում մեկնաբանված է լավագույն բջիջների ու կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի կոնկրետ փորձը 3-րդ Համաբանակային խորհրդակցության ու բջիջների անցնելու ժամանակից: Բրոշյուրը կազմելիս ոգտագործված է դիվիզիական ու շրջանային կոմյերիտական կոնֆերանսների և ԲԳԿԲ Քաղվարչության կից գումարված կոմյերիտական աշխատողների խորհրդակցության (1932 թվի ապրիլ—մայիս) նյութերը: Գրքում զետեղված նյութերը տակավին չեն սպառում կոմսոմոլի բազմապիսի աշխատանքի ամբողջ հանրագումարը: Կոմյերիտական բջիջների աշխատանքը տակտիկական պարապմունքներում, կապը քաղաքացիական կոմսոմոլի հետ, կոմյերիտական սեկտորների ու դասակային կազմակերպիչների աշխատանքը,— այս հարցերը լուսաբանված չեն և կմշակվեն լրացուցիչ կերպով: Բրոշյուրում չկա հատուկ բաժին կոմսոմոլին ցույց տրվող կուսղեկավարության մասին: Այդ հարցը լուսաբանված է ԲԳԿԲ Քաղվարչության՝ «կուսակտիվի սեմենարների համար» ժողովածվում :

Բրոշուրը կազմեց՝ ընկ. ՉԵՐՆԵՐԵՑՎՍԿԻՆ

Բրոշյուրը խմբագրեց ընկ. ՊԵՏՐՈՎԸ

ԲԳԿԲ Քաղվարչության կազմբաժին



## ՆԵՐՄՈՒՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Լինել յերիտասարդության Միության անդամ, նշանակում է գործը տանել այնպես, վորպեսզի իր աշխատանքի, իր ուժերը նվիրաբերի ընդհանուր գործին: Ահա այդ է կոմունիստական դաստիարակությունը» (Լենին)

3-րդ Համաբանակային խորհրդակցությունից ու բջիջների սիստեմին անցնելու ժամանակվանից կոմսոմոլն է՛լ ավելի մեծ նշանակություն է ստացել կուսակցական—քաղաքական աշխատանքի ամբողջ սիստեմում, կարմիր բանակի մարտունակության ամրացման մեջ: ՀամԼԿՅԵՄ անդամների թիվը բանակում առ 1 ապրիլի 1932 թվի համեմատած 1931 թվի ապրիլի 1-ի հետ ավելացել է 44,6 տոկոսով: Ընդունելությունը կոմսոմոլի շարքերում 1931 թ. համեմատած 1930 թվի հետ ավելացել է 63,6 տոկոսով, 1932 թվի 1-ին կվարտալում համեմատած 1931 թվի 1-ին կվարտալի հետ ընդունելությունը կոմսոմոլում ավելացել է 23,7 տոկոսով: Կոմյերիտական խավը մի քանի գնդերում հասնում է 50 տոկոսի, իսկ բազմաթիվ գնդային դպրոցներում ու ստորաբաժանումներում մոտենում է կոմսոմոլով մարտիկների ամբողջ կազմի հարյուր տոկոսային ընդգրկման:

Բանակային կոմսոմոլն ունի իր կազմի մեջ 48,7 տոկոս բանվոր, 44,7 տոկոս կոլտնտեսական, 33,6 տոկոս կուսկորիզ: Կուսակցական կազմակերպության ամբողջ կազմի 42 տոկոսը կամ յերկու հինգերորդից ավելին հանդիսանում է ՀամԼԿՅԵՄ անդամ: Այդ հանգամանքն արդեն վորոշում է կուսակցական ազդեցությունը կոմսոմոլի նկատմամբ և կոմսոմոլի իդեական—քաղաքական տոկունությունը:

Կոմսոմոլի բուռն աճումը կոմսոմոլի հեղինակության վառ ցուցանիշն է կարմիր բանակային մասսայի մեջ: Կոմսոմոլի աճման մեջ այդ հաջողությունները ձեռք են բերված՝ կուսակցության գլխավոր գծի համար, մարտական ու քաղաքական պատրաստության բարձր վորակի համար մղած պայքարի հիման վրա: Կոմսոմոլը ձեռք է բերել իր շարքերի իդեոլոգիական ամրացում, բարձրացրել է կոմյերիտականների օրինակելիությունը կարգապահության և ամբողջ ուսուցման մեջ:

Կոմսոմոլը ցուցաբերեց իրեն, վորպես կուսկազմակերպության

ամբողջ հետագան հակահեղափոխական տրոցկիզմի դեմ, կուսակցության գլխավոր գծից կատարած բոլոր շեղումների դեմ մղած պայքարում: Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ կոմսոմոլն անհրաժեշտ պայքար է մղում յերկու ճակատով՝ աջ թեքման դեմ, վորպես տվյալ էտապում գլխավոր վտանգի «ձախ» օպորտունիզմի դեմ, ինչպես նաև դեպի նրանց ցույց տված հաշտվողականության դեմ:

Ընկ. Ստալինի՝ «Պրոլետարսկայա Ռևոլյուցիա» ամսագրի խմբագրությանը գրած նամակն էլ ավելի մոբիլիզացիայի յենթարկեց կոմսոմոլին՝ ուժեղացնելու դասակարգային բոլշևիկյան աչալրջությունը կուսակցության գլխավոր գծի անաղարտության համար մղած պայքարում, նրա ամենափոքր անգամ խեղաթյուրումների դեմ, տրոցկիստական կոնտրաբանդի և նեխած լիբերալիզմի դեմ:

17-րդ Համամիութենական կուսկոնֆերանսի վորոշումների մշակումը պարզ ցույց տվեց, վոր կոմսոմոլը համառորեն կանգնած է կուսակցության լենինյան դիրքերում: Կոնֆերանսի վորոշումները լիակատար հավանության գտան կոմյերիտմիության կազմակերպության կողմից:

Բոլոր ժողովներում, զրույցներում կոմյերիտականները հանդես եյին գալիս հավանությամբ, աջակցությամբ, պատրաստակամությամբ՝ մասնակցելու Համամիութենական 17-րդ կուսկոնֆերանսի պատմական վորոշումների կենսագործման համար:

Կոմյերիտականների հիմնական մասսան ակտիվ մասնակցում է զորամասերի քաղ-բարոյական դրության ամրացման, կուսակցության գլխավոր գծի շուրջը կարմիր բանակայինների համախմբման աշխատանքներին, վճռական հակահարված տալով ամեն տեսակ խորթ բացասական տրամադրություններին:

Կոմյերիտական տոմսերի փոխանակումն ուղեկցվեց կոմսոմոլի մասսաների քաղաքական ակտիվության հետագա վերելքով, կոմսոմոլի շարքերի մարտունակության ամրացումով՝ կուսակցության գծի համար մղած պայքարում, հարվածայնությամբ ու սոցմրցակցությամբ կոմյերիտականների ընդգրկման աճումով, կոմյերիտական բջիջների ակտիվացումով՝ մարտական ու քաղաքական պատրաստության խնդիրների լուծման մեջ, Մարքսիստական—Լենինյան թեորիան ուսումնասիրելու նկատմամբ կոմյերիտականների ձգտման բարձրացումով:

Այս բոլորը վկայում են կոմսոմոլի քաղաքական աճման միանության մասին:

Դրա հետ միասին կոմսոմոլի առանձին կազմակերպություններում նկատվում են և այժմ էլ կան աջ օպորտունիստական ու «ձախական» տրամադրությունների առանձին փաստեր: Այդ տրամադրությունները ավելի վառ են այնտեղ, վորտեղ կոմյերիտական բջիջները չեն հայտաբերում դասակարգային պատշաճ աչալրջություն, վորտեղ թույլ է դաստիարակչական աշխատանքը:

Կոմյերիտական կազմակերպություններից վոմանք միանգամայն անբավարար չափով ու վոչ խորապես են ուսումնասիրում կազմակերպության իդեոլոգիական դրությունը, յուրաքանչյուր առանձին կոմյերիտականի քաղաքական դեմքը:

Կուսակցության կարևորագույն վորոշումներն ամեն անգամ չեն հասցվում բոլոր կոմյերիտականներին: Կոմյերիտականների մի մասը թույլ է մասնակցում մասսայական—քաղաքական ագիտացիային, չի կարողանում ճիշտ բոլշևիկորեն պարզաբանել կարմիր բանակայիններին, վերջիններիս հետաքրքրող հարցերը: Կոմսոմոլը տակավին բավականաչափ չի վարժվել շաղկապելու մարտական պատրաստության հարցերի կոնկրետ աշխատանքը՝ միաժամանակ ներմիութենական դաստիարակչական աշխատանքի ուժեղացման հետ:

Յուրաքանչյուր քաղմարմին, սպայական կոմիսար, յուրաքանչյուր կուսբջիջ ու կոմյերիտական կազմակերպություն պետք է հաստատապես հիշի, վոր առանց ներմիութենական դաստիարակչական աշխատանքի հիմնական բարեկարգման, բանակային կոմսոմոլը ներկայումս չի կարող լիովին հաղթահարել իր առած խնդիրները կարգապահության մեջ, մարտական պատրաստության մեջ, տեխնիկայի տիրապետման մեջ:

Ամբողջ ներմիութենական դաստիարակչական աշխատանքի բարելավումը, կոմսոմոլի մասսաների համախմբումը կուսակցության գլխավոր գծի շուրջը, նրանց ինտերնացիոնալ դաստիարակությունը յուրաքանչյուր կոմյերիտականի կողմից 17-րդ համամիութենական կուսկոնֆերանսի, կուսակցության կենտկոմի ու կառավարության վորոշումների (գյուղհարկի, հացամթերումների, մսամթերումների, ու կոլտնտեսական առևտրի մասին) լավ յուրացումն ու ճիշտ ըմբռնումն, կոմսոմոլի դասակարգային աչալրջության ու մարտունակության բարձրացումը՝ օպորտունիզմի ամեն տեսակ արտահայտությունների ու դասակարգայնորեն խորթ տրամադրությունների դեմ մղած պայքարում— ահա այն խնդիրները, վոր պետք է ներկայումս դրվեն ուշադրության կենտրոնում: Պետք է բարձրացվի կոմիսարների ու քաղղեկների անձնական պատասխանատվությունը, ինչպես նաև կուսբջիջների ու կուսկարգերի պատասխանատվությունը կոմսոմոլում աշխատանքի դրվածքի համար

Կոմյերիտական բջիջները պետք է սիստեմաբար աշխատեն աճման բազայի հետ, ներգրավելու համար միության շարքերը բանվորներին, առաջավոր կոլտնտեսականներին, մտավորական ու քաղաքական պաշտպանության հարվածայիններին: Դրա հետ միասին անհրաժեշտ է վճռականապես պայքարել աճման մեջ սոսկ թվի ետևից ընկնելու և ինքնահոսի դեմ: «Ֆանտաստիկական այն աճումը, վոր չի ուղեկցվում բոլշևիկյան աշխատանքի վորակի հետ, մեզ պետք չէ»: Մենք կողմնակից ենք «պրոլետարների և աշխատավորների այն կադրերի սիստեմատիկ մեր շարքերը հավաքագրելուն, վորոնք մեզ մոտ են գալիս մարտում, վորոնք ստուգված են պայքարում» (Պոստիշև): Կոմսոմոլի աճման ամբողջ աշխատանքը անհրաժեշտ է տանել կոմյերիտականների մարքս-լենինյան դաստիարակության լայն ծավալուն աշխատանքի հիման վրա, կոմյերիտական կազմակերպության իդեոլոգիական դրության հետագա ամրացման, մտավորական ու քաղաքական ուսուցման վորակի բարձրացման հիման վրա:

« Առավելագույն ուշադրությունը կենտրոնացնել ծավալելու համար դաստիարակչական աշխատանք: Նոր համալրումը յեփացնել կոմյերիտական կաթսայում: Այդ նոր համալրումից մշակել լենինցիներ՝ զինված կողմորոշման ուժով, բոլշևիկյան անհաշտությամբ դեպի օպորտունիզմը, լենինցիներ, վորոնք զուգակցում են իրենց մեջ իդեական—քաղաքական բարձր մակարդակը բոլշևիկյան գործարարությամբ ու նախաձեռնությամբ՝ պրակտիկ խնդիրների լուծման մեջ (Պոստիշև):

## ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Կոմյերիտական ժողովները հանդիսանում են բոլշևիկյան դաստիարակության, կոմյերիտասարդների իդեական-քաղաքական մակարդակի բարձրացման, նրանց ակտիվացման ամենաուժեղ միջոցը, բոլոր կոմյերիտականներին միութենական կյանքին ներգրավելու կարևորագույն մեթոդը, բոլոր կոմյերիտականների մեջ՝ իրենց բջիջի դրության և աշխատանքի համար պատասխանատվության զգացմունք զարգացնելու մեթոդը:

Կոմյերիտական ժողովներն առանձնապես կարևոր նշանակություն են ստանում ներկայումս, յերբ կոմսոմոլին առաջադրվում է իր դաստիարակչական աշխատանքն ամեն կերպ ուժեղացնելու խնդիրը, յուրաքանչյուր կոմյերիտականի այդ աշխատանքով ընդգրկելու խնդիրը:



Փաստերը վկայում են այն մասին, վոր կոմյերիտական ժողովների (մանավանդ բջջային ժողովների) պատրաստության և հենց բովանդակության վորակն ամեն անգամ չի գտնվում բարձր մակարդակի վրա: Բջիջներից վոմանք վատ և ուշ են հաղորդում ժողովների մասին, հազվադեպ են պատրաստում զեկուցումներ և քիչ են քննարկում իրենց ժողովներում ընդհանուր-միութենական և ընդհանուր-քաղաքական հարցերը:

135-րդ հրաձիգ գնդի 6-րդ վաշտի բջիջը հունվարից մինչև մարտ ամիսների ժամանակաշրջանում անց է կացրել 8 ժողով: Այդ ժողովներում քննարկվել են հետևյալ հարցերը.—նախագահության վերընտրությունների մասին, ուժերի բաշխման մասին, կոմյերիտականների կողմից քաղպարապմունքների յուրացման մասին, տեխնիկայի տիրապետման մասին և այլն: Սակայն քննարկված 14 հարցերի մեջ միայն մեկն է ընդհանուր—քաղաքական հարց. այն է՝ 17-րդ կուսկոնֆերանսի վորոշումների մասին:

37-րդ հեծգնդի դպրոցի բջիջում անց է կացված վեց ժողով: Բայց այդ ժողովներում չի քննարկված վոչ մի ընդհանուր-քաղաքական հարց:

Մի քանի զորամասերում (օրինակ՝ 37-րդ հեծգնդում) բջջային ժողովների քանակը «կրճատված», հասցրված է ամսական մեկ ժողովի:

Բարձրացնել կոմյերիտական ժողովների վորակը, լիովին օգտագործել ժողովները, վորպես բոլշևիկյան դաստիարակչության միջոց,—ահա բջիջների խնդիրները:

— «Կոմյերիտականների բջիջների կանոնադրությունը» սահմանում է ժողովների քանակը—ամսական յերեք ժողով համագնդային ժողովների հետ, ինչպես նաև մանրամասնորեն նախատեսում է այն հարցերի բնույթը, վոր պետք է քննարկվեն ժողովներում: Դրանից ել հարկավոր է յելնել ժողովների պատրաստման և անցկացման ժամանակ:

—Հատուկ ուշադրություն դարձնել զեկուցողների պատրաստության վրա, ժամանակին ծանուցել ժողովի ժամանակի, տեղի, օրակարգի մասին, ուշադրություն դարձնել անկուսակցական կարմիր բանակայիններին կոմյերիտական ժողովներին ներգրավելու վրա:

— Կոմյերիտական աշխատանքի պրակտիկ հարցերի հետ միասին սիստեմատիկաբար քննարկել ժողովներում ընդհանուր-միութենական և ընդհանուր քաղաքական հարցեր: Ժողովները պետք է նպաստեն կոմսոմոլի մեջ կուսակցության ու կառավարության վորոշումների, թե՛ մեր յերկրում և թե՛ սահմանից դուրս տեղի

ունեցող քաղաքական կարևորագույն անցքերի պարզաբանման աշխատանքների լայն ծավալմանը:

— Հասնել նրան, վոր ժողովում դրված յուրաքանչյուր զեկուցում դաստիարակի կոմյերիտականին, բարձրացնի նրա քաղաքական գիտակցության մակարդակը և ակտիվությունը՝ կուսակցության վորոշումների համար, ստորաբաժանման ու զորամասի մարտական պատրաստության բարձր մակարդակի համար նրա մղած պայքարում:

— Կոմյերիտական ժողովը պետք է լայնորեն ոգտագործվի բջիջում, վորպես կատարման ստուգման միջոց: Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է գիտենա, վոր իր իրավունքն է, պարտականությունն է հարցնել ժողովում, թե ինչպես է կատարել այս կամ այն կոմյերիտականը բջիջի նախագահության այս կամ այն անդամը նախընթաց ժողովում նրան տրված առաջադրությունը: Նախընթաց ժողովում ընդունված վորոշումների կատարման ստուգումը պետք է մտցնել յուրաքանչյուր կոմյերիտական ժողովի պրակտիկայի մեջ:

— Կոմյերիտական ժողովը պետք է լինի ինքնաքննադատության ու ներմիութենական դեմոկրատիայի լայն զարգացման վայր:

Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է գիտենա, վոր ինքն իրավունք ունի ժողովում դնելու յուրաքանչյուր այնպիսի հարց, վոր վերաբերում է բջիջի դրության ու աշխատանքին՝ վորևէ բնագավառում, ինչպես նաև յուրաքանչյուր այն կոմյերիտականի հարցը, վոր խախտել է միութենական կարգապահությունը, ծռել է կուսակցության գիծը, վարկաբեկել է կոմսոմոլը, թույլատրել է էտիկային հակառակ վարմունքներ կամ վատ է աշխատել:

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տակավին բավական չէ այն վորոշ հառաջադիմությունը, վոր ձեռք է բերված վերջերս միութենական դպրոցների աշխատանքների մեջ: Տակավին վոչ բոլոր կոմյերիտականներն են ընդգրկված մարքս-լենինյան ուսուցումով: Առանձին դպրոցներում հաճախելիությունը չի հասնում 70 տոկոսի: Սակավ չեն այնպիսի դեպքեր, յերբ ղեկավարները պարապմունքների յեն գալիս միանգամայն անպատրաստ: 37-րդ հրաձիգ գնդում կոմյերիտական դպրոցի ղեկավար ընկ. Լյաշչենկոն պարապմունքի յե յեկել առանց մշակելու 17-րդ կուսկոնֆերանսի վորոշումները:

Մի քանի զորամասերում ղեկավարների կադրերը չեն ամրացված և հաճախ փոփոխում են: 25-րդ հրաձիգ գնդի մի կոմյերիտական դպրոցում ձմրան ընթացքում փոխվել է յոթ ղեկավար: Համարյա յուրաքանչյուր պարապմունքի գալիս է յեղել նոր ղեկավար: Բնական է, վոր այդ դպրոցում չի կարելի սպասել ուսուցման բարձր վորակ:

ՄՍԲՄ հրետանական դպրոցում միութենական դպրոցների պարապմունքներն ընթանում են անխափան, կանոնավոր ձևով: Հաճախելիությունն 90 տոկոս է: Այսոր պարապմունքի թեման է՝ «Յերիտկոմինտերնը»: Ուղիղ ժամի 6-ին դպրոցի ղեկավար ընկ. Կոտյոլովը ներկա յե պարապմունքին: Առաջին 5-7 րոպեյում ղեկավարն ամփոփ տալիս է նյութատակադրումը, թեմայի հիմնական մտքերը: Պարապմունքներին ուշացել են մի քանի հոգի:

— Թույլ տվեք ներկա լինել... իրար յետևից գալիս են ուշացողները: Ընկ. Կոտյոլովը պարապմունքի սկզբում մեծ մասամբ խոսում է ինքը: Այդ հոգնեցնում է լսողներին: Նա անցնում է զրույցի:

Զրույցն ավելի հետաքրքիր է դառնում: Ղեկավարի հարցերին պատասխանում են 23 լսող: Շատ հարցեր են առաջ գալիս լսողների մեջ: Բոլոր լսողների ձեռքում կան տետրեր, բայց գրանցումներ չեն կատարվում: Իսկ ով վարում է գրանցում, նա յել այդ անում է չափազանց թույլ, սխալ: Ահա ունկնդիր Ովսյաննիկովի գրանցումը՝ «Ֆրակցիան տարաձայնություն է»: «Փաշիստները—կապիտալիստական տարրերից են (անտիսեմիտներ)»:

Ընկ. Կոտյոլովը չի ղեկավարում գրանցումները:

Պարապմունքի վերջում տարվում է զրույց 17-րդ համամիութենական կուսկոնֆերանսի մասին: Կոնֆերանսի վորոշումներն առաջին հնգամյակի արդյունքների մասին, յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրների մասին յուրացված են ստույգ ձևով:

Անց է կացված յուրացման յերկու ստուգում: Առաջին ստուգման ժամանակ յեղել է 20 տոկոս թույլ, յերկրորդ ստուգման ժամանակ՝ միայն վեց տոկոս: Ղեկավարը թույլերին տալիս է անհատական առաջադրություններ, հանձնարարում է գրականություն: Բջիջի նախագահությունը լայն չափով գործադրում է ուժեղ ընկերներին թույլերին ամրացնելու մեթոդը:

Ակտիվությունը պարապմունքներում ապահովվում է յուրաքանչյուր թեմայի համար ունկնդիրների ինքնապատրաստության կազմակերպումով: Դրա համար հատկացվում են հատուկ ժամեր:

Պարապմունքների հետևանքով աճել է ունկնդիրների քաղաքական ակտիվությունը: 12 հոգի մտել են Համկոմկուսի (բ), 5 հոգի ՀամԼԿՅԵՄ շարքերը և դպրոցում այժմ բոլորն էլ կոմյերիտականներ են:

Ղեկավար ընկ. Կոտյոլովը հետաքրքրվում է իր աշխատանքով:

Նա սիրում է պրոպագանդիստական աշխատանքը: Կարմիր Բանակի Տան կից սեմինարը հաճախում է կանոնավոր, սակայն գոհ չէ իր աշխատանքներով. «ձանձրալի են... դասախոսություններ են կարդում այնտեղ»: Ընկ. Կոտյոլովը միանգամայն իրավացիորեն մատնանշում է քաղղեկի և մանավանդ կոմսոմոլի բջիջի նախագահության անբավարար ոգնությունը (վոչ մի անգամ չեն լսել նրա զեկուցումը):

Գրադարանը թույլ է ոգնում գրականությամբ:

— Ինձ ավելի շատ կենդանի ոգնություն է պետք,— ասում է ընկ. Կոտյոլովը:

## ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Կայի № գնդում միութենական լուսավորության գործը աշխատում է որինակելիորեն: Հաճախելիությունն 95–100 տոկոս է: Պարապմունքների ձախողումներ չեն յեղել: Պարապմունքների վորակը բավարար է: Գնդի կոմյերիտական կազմակերպությունը ձեռք բերել այդ հաջողությունները շնորհիվ կուսկազմակերպության ուշադրության, ագիտմասսայական սեկտորի լավ աշխատանքի և միութենական լուսավորության համար կոմյերիտական բջիջների քարտուղարների անհատական պատասխանատվության բարձրացման:

— Կոմյերիտական բջիջի յուրաքանչյուր քարտուղար սերտ կապ է պահում այն դպրոցի ղեկավարի հետ, վորտեղ պարապում են տվյալ բջիջի կոմյերիտականները:

— Բջիջի քարտուղարը շաբաթական տեղյակ է կոմյերիտականների՝ պարապմունքների հաճախելիության ու հառաջադիմության մասին:

— Լավ է կազմակերպված յետ մնացողների ոգնությունը՝ ուժեղներին թույլ ընկերներին ամրացնելու միջոցով:

— Թույլ յուրացված հարցերի համար կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ:

— Անցած թեմաների ավելի խորացրած մշակման ու ինքնաստուգման համար լայնորեն գործադրվում են քարտեր, քաղվիճակախաղեր (լոտորյա):

— Պարապմունքներին ինքնապատրաստության համար ոգտագործվում է բրիգադային մեթոդը (4–5 հոգի կոլեկտիվ ձևով մշակում են նյութը):

— ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոյի ու նախագահության նիստերում և կոմյերիտական բջիջների ժողովներում լսվում են դպրոցների ղեկավարների ու ավագների (ստարոստաների), ինչպես նաև կոմյերիտականների անհատական հաշվետվությունները՝ նրանց քաղուսուցման մասին:



— Միութենական դպրոցների և առանձին ունկնդիրների մասին կնքվում են սոցմրցակցության պայմանագրեր:

— Դպրոցների ղեկավարների պատրաստության համար Կարմիր Բանակի Տան կից անց է կացվում սեմինար: Սեմինարը հաճախում են կանոնավոր:

— Յուրաքանչյուր պարապմունքից առաջ քաղղեկները կուսբյուրոյի հանձնարարությամբ ստուգում են ղեկավարների պատրաստությունը:

— Պարապմունքների առաջիկա թեմայի մասին հայտարարվում է ունկնդիրներին:

— Ղեկավարը յուրաքանչյուր ունկնդրի տալիս է կոնկրետ առաջադրություն՝ պարապմունքի հերթական թեմայի պատրաստվելու համար:

— Ակումբը և գնդային գրադարանը առաջիկա պարապմունքի համար կազմակերպվում են խորհրդատվություն (կոնսուլտացիա), գրականության ու լրագրային նյութի ցուցահանդեսներ:

Միութենական լուսավորությունը, վորպես կոմյերիտականների կարևորագույն ձևերից մեկին, պետք է նվիրվի բացառիկ ուշադրություն:

Յուրաքանչյուր բջիջ պետք է հոգ տանի կոմյերիտականներին միութենական լուսավորությամբ 100 տոկոսով ընդգրկելու մասին: Չպետք է լինի վոչ մի կոմյերիտական, վորը չհաճախի միութենական դպրոցների պարապմունքները: Պարապմունքների անկանոն հաճախելիության վրա պետք է նայել վորպես միութենական պարտականությունների չկատարման վրա:

Հարկավոր է բարձրացնել վերահսկողությունը պրոպագանդիստական աշխատանքի նկատմամբ, բարձրացնել ուսուցման իդեոլոգիական վորակը, որինակելիորեն դնել ինքնապատրաստությունը, դպրոցների ղեկավարների հրահանգումն ու ոգնությունը.— ահա այն մարտական խնդիրները, վորոնց լուծումով պետք է զբաղվեն կոմյերիտական բջիջները, ՀամԼԿՅԵՄ գնդային բյուրոները՝ կուսակցական կազմակերպության հետ միասին ու նրա ղեկավարությամբ:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԹԵՐԹԻ ՀԵՏ

Թերթը կարևորագույն ոգակ է քաղաքական ագիտացիայի սիստեմում: Չի կարելի զորամասում իսկական ձևով քաղաքական

ադիտացիա վարել՝ առավելապես չափով չօգտագործելով թերթի նյութը: Կանոնավոր կերպով թերթ չկարդացող կոմյերիտականը միշտ էլ յետ կմնա ընթացիկ քաղաքական անցքերից, մարտական ու քաղաքական պատրաստության ընդհանուր ընթացքից, նա չի կարող աշխատանք տանել մասսաների մեջ:

Մի շարք բջիջների աշխատանքի ստուգումը ցույց տվեց, վոր աշխատանքը թերթի հետ ամենաթույլ կողմերից մեկն է: Կոմյերիտականներից վոմանք կանոնավոր կերպով թերթ չեն կարդում, չեն աշխատում կարմիր բանակայինների հետ լրագրային նյութի շուրջը:

№ ավտոմասում 19 հարցաքննված կոմյերիտականներից միայն 2 հոգի յեն կարդում «Կրասնոարմեյսկայա Պրավդա» թերթը, մնացածը թերթ չեն կարդում:

— Յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է ամեն որ թերթ կարդալ, պատմել կարդացածը, թերթ կարդալ սակավ դրագետ ընկերոջ համար:

— Գնդային բյուրոյի քարտուղարը, կոմյերիտական բջիջի քարտուղարը պետք է ղեկավարեն բարձրաձայն ընթերցողներին, ողնեն, ցույց տան կոմյերիտականներին, թե յուրաքանչյուր համարում ինչ պետք է կարդալ, ինչի՞ վրա աշխատել:

Հենվենք մի որինակի վրա:

15-րդ հրաձիգ գնդի 3-րդ գնդացրային վաշտի բջիջում առանձնացված է բարձրաձայն ընթերցողների ու զրուցողների խումբակ ամենից պատրաստված ու դրագետ ընկերներից:

— Ընթերցողներն ու զրուցողները սիստեմատիկաբար հրահանգվում են կուսակցական կամ կոմյերիտական բջիջի քարտուղարի կողմից: Ամեն անգամ նրանց մատնանշվում է, թե այսոր ինչ պետք է կարդալ դասակներում ու ջոկերում:

— Թերթի մասսայական ընթերցման համար սահմանված է վորոշ ժամանակ:

— Ժամանակին յուրաքանչյուր մարտիկին են հասցվում միջազգային անցքերը, կուսակցության ու կառավարության կարևորագույն վորոշումները: Այսպես որինակ՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումը կոլտնտեսություններում անասունների հարկադիր համայնացման դեմ հասցրված եր յուրաքանչյուր կոմյերիտականին ու մարտիկին նույն որը, հենց վոր ստացված եյին թերթերը: Բացի դրանից, այդ վորոշման առթիվ բջիջը կազմակերպել է նամակների առաքում դեպի կոլխոզները: Ահա այդպիսի մի նամակի բովանդակությունը. «Բարև, ընկեր կոլտնտեսականներ ու ծնողներ: Ուղարկում եմ ձեզ կուսակցության վորոշումը: Արդել-



վում է բռնի կերպով համայնացնել անասունը: Այդ մասին պատմեցեք բոլոր կոլտնտեսականներին ու համագյուղացիներին, իսկ ինձ կարմիր բանակում հաղորդեցեք, թե ինչ արդյունք կլինի»:

— Բացի անցկացվող ընթերցումներից, բջիջն օգտագործում է նաև տեղի ունեցող անցքերի մասին մարտիկներին տեղյակ պահելու նաև այլ միջոցները: Յերբ հաղորդեցին՝ Լեոնտևյան նրբանցքում Շտեյնի արձակած պրովակացիոն գնդակի մասին, 3-րդ գնդացրային վաշտի մարտիկ կոմյերիտական ընկ. Մորոզովն ուղղակի գնդային ընթերցարանից վազեց ճաշարան և ճաշի ժամանակ կարճառոտ հաղորդեց տեղի ունեցած անցքի մասին: Բջիջը կորողացավ այդ առթիվ արագ մոբիլիզացիայի յենթարկել մարտիկների ուշադրությունը և հաջորդ որերին նրանք կանոնավոր ու հետաքրքրությամբ հետևում եյին թերթերին:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ

Կոմսոմոլին առաջադրվող խնդիրների լուծման գործում չափազանց մեծ դեր է պատկանում կոմյերիտական ակտիվին: Առանց ակտիվի հետ սիստեմատիկ աշխատանքի չի կարելի լուծել կոմյերիտական նոր համալրման մարքս-լենինյան դաստիարակության խնդիրները: Առանց ակտիվ կադրերի հետ սիստեմատիկ աշխատանքի կոմսոմոլը կարող է կատարել նրան ներկայումս առաջադրվող բարձր պահանջները:

Վերջերս վորոշ հառաջադիմություն կա կոմյերիտական ակտիվի հետ տարվող աշխատանքներում, որինակ ՄՀՀԴ, 23-րդ, 45-րդ, 30 -րդ, հող.:

Այդ զորամասերում բացի կուսակցական ու միութենական լուսավորության ցանցով ակտիվիստների ընդգրկման, գործադրվում են կոմյերիտական ակտիվի այսպես կոչված անընդհատ սեմինարներ: Այդ սեմինարների եյությունն այն է, վոր ուսուցման ձմրան ու ամրան շրջանների նախորեյին հրավիրվող ստորին ակտիվի գնդային սեմինարները շարունակում են աշխատել սիստեմատիկաբար՝ անցկացնելով ցիկլադում մի պարապմունք: Այդ պարապմունքներում մշակվում են կուսակցության ու կոմսոմոլի ընթացիկ վորոշումները, այդ վորոշումների իրացման ուղիներն ու մեթոդները տվյալ զորամասի կոնկրետ պայմաններում: Բացի դրանից, սեմինարները պատրաստում են ստորին ակտիվ՝ տակտիկական պարապմունքներում ու մանյովրներում աշխատելու համար:

Բացի սեմինարներից, զորամասերից մի քանիսում, որինակ, ՄՀՀԴ, կոմյերիտական ակտիվի համար կազմակերպվում են բար-

հրդատվություններ: Նրանք անց են կացվում քաղաքականապես լավ գրագետ կուսակցականների ղեկավարությամբ: Խորհրդատվությունները կազմակերպվում են հետևյալ ձևով. Տրվում է առաջադրություն ակտիվին—մշակել ընկ. Գոտլիչևի ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի 3-րդ պլենումում արտասանած ճառը. այնուհետև հավաքվում է կոմյերիտական ակտիվը, մտքերի փոխանակություն է կատարվում, տրվում է պատասխան այն ամենին, ինչ անհասկանալի յեր ինքնուրույն մշակման ընթացքում:

Բացի դրանից, այդ զորամասերում օգտագործվում են նաև այսպիսի ձևեր. թեորետիկ յերեկույթներ ու ցերեկույթներ (վերջիններս միայն հանգստյան օրերին), ակտիվի հանդիպման յերեկույթներ հին բայլշևիկների հետ, պարբերաբար հրավիրվում են կոմյերիտական ակտիվի ժողովներ և խորհրդակցություններ:

Սակայն շատ մասերում կոմյերիտական ակտիվի հետ տարվող աշխատանքի ընդհանուր դրությունը պարզապես անբավարար է և չի համապատասխանում կոմսոմոլի ժամանակակից խնդիրներին:

Կոմյերիտական ակտիվի խորհրդակցությունները յերբեմն վերածվում են տեղեկությունների հավաքի: Թեորետիկ յերեկույթներն անցնեն կացվում կամպանիոն ձևով: Ամեն անգամ ժամանակին չեն հասցնվում ակտիվին կուսակցության ու կոմսոմոլի վորոշումները: Ղեկավար ակտիվից կոմյերիտականների մի մասը,—գնդային բյուրոների քարտուղարները և մինչև իսկ կոմյերիտական բջիջների քարտուղարներից վոմանք, իրենք անմիջորեն քիչ և անբավարար չափով են աշխատում մասսաների մեջ, գտնում են, վոր իրենց դերն է միայն «կազմակերպել», «բաշխել ուժերը», «հրահանգել»:

Առօրյա աշխատանքները մասսաների մեջ յուրաքանչյուր կոմյերիտականի կարևորագույն խնդիրն է:

Յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է հատկապես հիշել, վոր ակտիվիստի աշխատանքում վճռականը պետք է լինի անձնական օրինակը, օրինակելիությունը մարտական ու քաղաքական ուսուցման մեջ, կարգապահության մեջ, տեխնիկայի բարձր յուրացումը, իր քաղաքական ու կուլտուրական մակարդակի անընդհատ բարձրացումը:

Կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները պարտավոր են ստեղծել ակտիվի կուսակցական ուսուցման համար բոլոր անհրաժեշտ պայմանները, պահանջելով յուրաքանչյուր ակտիվիստից համառ աշխատանք իր քաղաքական մակարդակի բարձրացման համար: Անհրաժեշտ է, վոր կոմսոմոլի գնդային բյուրոներն ամբողջովին վերակառուցվեն ստորին ակտիվի օգնության



1008
34563

համար, նրա աշխատանքում ցույց տրվող ղեկավարության կոնկրետ ցուցադրանքի համար: Յուրաքանչյուր կոմյերիտական բջիջ պետք է սիստեմատիկ աշխատի աճեցնելու համար ակտիվի նոր կադրեր յերիտասարդ կոմյերիտականներից, դաստիարակելով նրանց գործնական աշխատանքներում:

«Համբերությամբ ու համառ լենինյան ուսուցում,— այսպիսին է այն ուղին, վորով պետք է անցնի կոմսոմոլի ակտիվը, յեթե նա իրոք ուզում է դաստիարակել յերիտասարդության միլիոնավոր մասսաներին պրոլետարական հեղափոխության վոգով (Ստալին):

## ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Պայքարը կոմյերիտականների օրինակելիության, առաջատար դերի համար քաղպարապմունքներում լայն ծավալված է բոլոր կազմակերպություններում: Սակայն արդյունքներն ամենևին հավասարաչափ չեն:

«Քաղպարապմունքներում առաջին տեսչական ստուգատեսին մեզ մոտ չկային յետ մնացողներ:

Յերկրորդ տեսչական ստուգատեսին պարզվեց, վոր մենք չենք ամրացրել ձեռք բերած հաջողությունները» (№ ռազմամաս):

«Կոմյերիտականների կողմից քաղպարապմունքների «լավ» յուրացման վերաբերյալ ԿԿԲ Քաղվարչության դիրեկտիվը կատարել են միայն յերկու բջիջ, մնացածում «թույլ» կոմյերիտականների տոկոսը տատանվում է 5-ից մինչև 10: Բացառություն են կազմում անտեսավաշտերի ու պարետային դասակների բջիջները: Նրանք քաղպարապմունքներից թույլ ունեն մոտ 30 և մինչև անգամ մոտ 50 տոկոս(74-րդ հրաձիգ դիվիզիա):

Կան բավականաչափ փաստեր, յերբ բջիջները պարապմունքների ծրագրի խոր յուրացման համար համառ պայքարի փոխարեն զբաղվում են պարզ ձևականությամբ, «տոկոսներ հաշվելով»: Մինչդեռ քաղպարապմունքների յուրացման վորակը չափվում է ամենից առաջ նրանով, թե ինչ չափով կարմիր բանակայինն ու կոմյերիտականը խորն են յուրացրել կուսակցության քաղաքականության հիմնական հարցերը, նրա գլխավոր դիծը, ինչ չափով նրանք ճիշտ են հասկանում միջազգային ու ներքին դրությունը, յերկրի սոցիալիստական շինարարությունը, պաշտպանության ու Կարմիր Բանակի խնդիրները: Այդ գծով էլ պետք է ծավալվեն բջիջների գործնական աշխատանքները: Կոմյերիտական կազմակերպությունների, ինչպես և կուսակցական կազմակերպությունների խնդիրն է «ամեն կերպ օգնել քաղպարապատին՝ իրագործելու առօրյա կոնտրոլը քաղպարապմունքների իդեոլոգիական վորակի

և կարմիր բանակայինների կողմից յուրացման նկատմամբ, հասնելով նրան, որ կոմունիստներն ու կոմերիտականներն առաջատար դեր խաղան քաղպարապմունքների ու կարմիր բանակայինների պատրաստության մեջ» (բջիջների քարտուղարների համաբանակային 3-րդ խորհրդակցության որոշումներից):

## ԻՆՉՊԵ՞Ս ԱՇԽԱՏԵԼ

Կոմսոմոլն իր կոնֆերանսներում պարտականություն է հանձըն առել՝ «ընթացիկ տարում հասնել ԲԳԿԲ ԹՎ այն հրամանի կատարմանը, վորով պահանջվում է, վոր բոլոր կոմերիտականները քաղպարապմունքները յուրացնեն "լավ,, գնահատականով»: Այդ պարտականությունը պետք է կատարվի: Ահա առաջավոր բջիջների ու կազմակերպությունների (11-րդ հրահանգներ, 135-րդ հրաձիգ գունդ, Կապի № գունդ, 8-րդ հեծբրիգադ և այլն) փորձի հիման վրա մի քանի գործնական ուղիներ այդ խնդրի լուծման համար:

—Նախագահության նիստում, ժողովներում բջիջը լսում է քաղղեկի, խմբակավարի, առանձին կոմերիտականների զեկուցումներ կոմերիտականների կողմից քաղպարապմունքների յուրացման մասին. հարցերի դրումն ու լուծումը կրում են զուտ կոնկրետ բնույթ.

— Բջիջն ուշադրությամբ ուսումնասիրում է քաղպարապմունքների յուրացումը, դեպի քաղպարապմունքները յուրաքանչյուր կոմերիտականի ցույց տված վերաբերմունքը, տեղեկանալով այդ մասին քաղղեկից ու խմբակավարից:

— Բջիջը կազմակերպում է յետ մնացող կոմերիտականների ու անկուսակցական կարմիր բանակայինների օգնությունը՝ վերացնելու համար նրանց քաղպատրաստութ. մեջ յեղած թերությունները՝ այս ինչ թեմայի այս ինչ հարցի նկատմամբ:

— Հետ մնացողներին օգնություն ցույց տալու համար, բացի պարապմունքների ինքնապատրաստության կազմակերպումից, բջիջն օգտագործում է ուժեղների ամրացումը թույլերին, ընթերցումների և զրույցների անցկացում, տվյալ հարցի տվյալ թեմայի վերաբերյալ գրականության հանձնարարում:

— Լայնորեն գործադրել քաղմարտեր, քաղվիճակախաղեր, առանձին հարցերի վերաբերյալ խմբակների կազմակերպում, վոր նպաստում են ծրագրի ավելի խոր մշակմանը:

— Բջիջը մասսայականացնում է իլիչևկայի միջոցով քաղպարապմունքների մեջ լավագույն կարմիր բանակայիններին և այն կրտսեր հրամանատարներին, վորոնք օրինակելիորեն տանում են ինքպատրաստությունը:

— Բջիջն առաջ է քաշում քաղպարապմունքներից յետ մնացող կոմերիտականներին, տալով յուրաքանչյուրին կոնկրետ առաջադրություն՝ ինչպես չափել թերությունները, միութենական պատասխանատվության է կանչում պարապմունքներից չարամտորեն խուսափողներին:

— Բոլոր կոմերիտականներն ակտիվ մասնակցում են ինքնապատրաստությանը և ընթերցմանն ու նյութի մշակմանը, օգնում են խմբակավարի օգնականին՝ պարզաբանելու կարմիր բանակայիններին հարցերը, ընտրելու գրականություն, լրագրային նյութ, ցուցադրական ձեռնարկներ, նայում են միմյանց գրանցումները տետրերում, օգնում են սակավ գրագետներին՝ ճիշտ գրանցելու թեմայի հարցերը:

— Բոլոր կոմերիտականներն ակտիվ օգնում են քաղղեկին ու խմբակավարին՝ կազմելու դիագրամաներ, պլակատներ, բազմացնելու քաղպարապմունքների հարցացուցակները:

— Կոմերիտականները քաղպարապմունքներում ակտիվ օգնում են խմբակավարին, տալիս են իրենց հետաքրքրող հարցերը, բացատրում են կարմիր բանակայիններին, միահամուռ հակահարված են տալիս բոլոր սխալ տեսակետներին, պայքարում են քաղպարապմունքների իդեոլոգիական բարձր վորակի համար:

— Բոլոր կոմերիտականները մարտիկների մնացած մասի հետ միասին մասնակցում են սոցմրցակցությանը՝ լավագույն ձևով յուրացնելու համար քաղպարապմունքները, լավագույն ձևով պատրաստվելու պարապմունքներին:

Կոմերիտական բջիջների ուշադրությունը պետք է դարձված լինի նրա վրա, վոր բոլոր կոմերիտականները ներգրավվեն քաղպարապմունքների ակտիվ մասնակցությանը: Յուրաքանչյուր կոմերիտական պետք է լավ յուրացնի քաղպարապմունքների ծրագիրը, ակտիվ օգնի խմբակավարին քաղպարապմունքների անցկացման մեջ և օրինակ ծառայի մնացած մարտիկների համար: Ժամանակին տալ հարկավոր հարցը, հայտնել իր կարծիքն այս կամ այն հարցի առթիվ, բերել ցուցադրական օրինակ, հանդես գալ սխալ, յերբեմն խորթ կարծիքների դեմ, վոր արտահայտել է կարմիր բանակայիններից մեկն ու մեկը—ահա կոմերիտականի խնդիրը: Ավելին ևս, կոմերիտականները պետք է պարբերաբար նախապես հայտնեն խմբակավարին այն հարցերի մասին, վոր հետաքրքրում են կարմիր բանակայիններին, վոր թույլ են հասկացել ու յուրացրել կարմիր բանակայինները, ինչպես նաև տան իրենց կարծիքը նախընթաց պարապմունքների մասին: Այս բոլորն անհրաժեշտ են քաղպարապմունքները հաջող կերպով անցկացնելու համար:

# ԿՈՄՍՈՄՈԼՆ ՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

*«Կոմերիտականը պետք է լինի օրինակելի, կարգապահ կարմիր բանակային» (Համ. ԼԿԵՄ կանոնադրից)։*

Կոմսոմոլը լայն պայքար է ծավալել վերացնելու համար կարգապահական զանցանքները կոմերիտական շարքերում։ Այդ տեսակետից ձեռք են բերված ակնհայտ հաջողություններ։

Ներկայումս կոմսոմոլն ունի հազարավոր կոմերիտականներ, որոնք իրենց ամբողջ ծառայության ընթացքում չեն գործել ոչ մի կարգապահական զանցանք, կան հարյուրավոր բջիջներ, որոնք չունեն կարգապահական զանցանք։ Այսպիսի բջիջներ ԲԳԿԲ կան 1353 հատ (հեռագրական տվյալներ առ 1-ն ապրիլի 1932 թվի)։

Սակայն դեռ ոչ բոլոր կոմերիտականներն են օրինակ ծառայում զինվորական օրինակելի կարգապահության մեջ։

—«Լավ, մի՞թե կարելի չէ 2 տարի ծառայել և չկատարել ոչ մի զանցանք, չվաստակել վերակարգ»։ «Ես աշխատում եմ բոլոր ուժերով,—ասում է ընկ. Բոլոգենկոն—№հրետգնդի 3-րդ մարտկոցի կոմերիտականը,—բայց և այնպես ունեմ 3 վերակարգ»։

—Իսկ տույժը ճի՞շտ է տրված։

—Այո, ճիշտ է տրված։

—Իսկ ինչպե՞ս դուք գործեցիք զանցանքը։

—Մոռացա, չնկատեցի,—պատասխանում է Բոլոգենկոն,—«պատահում է. ձին, որ չորս ոտք ունի դարձյալ սայթաքում է։

Նման տրամադրությունները վնասում են կարգապահության գործին։ Նրանք քողարկում են թափթփվածությունը և անկարգապահությունը։ Այդպիսիների դեմ պետք է վճռական պայքար մղել։

Երկաթե հեղափոխական կարգապահությունը հանդիսանում է կարմիր բանակի մարտունակության հիմքը։ Անհրաժեշտ է խորապես արմատացնել յուրաքանչյուր կոմերիտականի գիտակցության մեջ համաբանակային 3-րդ խորհրդակցության այն ցուցումը, թե «կուսակցականների ու կոմերիտականների օրինակելիությունը վճռական դեր է խաղում զինվորական կարգապահության ամրացման մեջ։ Այն կոմունիստներն ու կոմերիտականները, որոնք օրինակ չեն հանդիսանում զինվորական օրինակելի կարգապահության մեջ, արժանի չեն կուսակցության ու լենինյան կոմսոմոլի անդամի կոչման»։



## ՊԱՅՔԱՐԻ ՓՈՐՁ ԲԱՐՁՐ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Վերջին ժամանակվա փորձը ցույց է տալիս, որ կոմերիտականների կողմից զանցանքները միանգամայն վերացնելու խնդիրը մի շարք բջիջների համար հանդիսացավ միանգամայն իրագործելի խնդիր։ Ահա այդ բջիջները՝ 14-րդ հրաձիգ գնդի 2-րդ գնդացրային վաշտ, 15-րդ հրաձիգ գնդի 3-րդ վաշտ, 3-րդ հրաձիգ գնդի 3-րդ վաշտ, 9-րդ հրաձիգ գնդի 1-ին վաշտ։ Այսպիսի բջիջներ ներկայումս շատ կան։

Ինչպե՞ս են բջիջները ձեռք բերել այդ հաջողությունները։

— Բջիջները սիստեմաբար աշխատում են յուրաքանչյուր առանձին կոմերիտականի հետ, հաշվի են առնում նրա թույլ կողմերն ուսուցման և կարգապահության մեջ, տեղեկանալով այդ մասին հրամանատարից։

— Վաշտի հրամանատարը, քաղղեկը խորհրդակցություններ են անցկացնում և զրույցներ են տանում կոմերիտականների հետ, ծանոթացնում են բջջին վաշտում կարգապահության դրության մասին և ցուցումներ են տալիս, թե ինչ ճանապարհով պետք է վերացնել յեղած թերությունները։

— Բջջի նախագահությունը պարբերաբար լսում է կոմերիտականների անհատական զեկուցումներ։

— Կարգապահության հարցերը դրվում են բջիջների ժողովներում և լուսաբանվում են իլիչեկաններում։ Բջիջը մասսայականացնում է օրինակելի մարտիկներին։

— Բոլոր կոմերիտականներն աշխատում են անկուսակցական կարմիր բանակայինների հետ, ներգրավելով նրանց ակտիվ պայքարի՝ առանց կարգապահական զանցանքների ստորաբաժանման ու զորամասի համար։

— Երեկոները կարմիր բանակայինների խմբակները ուսումնասիրում են ներքին ծառայության կարգապահական և այլ կանոնագրքեր։ Այդ աշխատանքն անց են կացնում կոմունիստները կոմերիտականների հետ միասին՝ անհատական առաջադրությունների կատարման կարգով։

— Անց են կացնում զրույցներ սոցիալիստական շինարարության առանձին հարցերի վերաբերյալ, ցույց տալով սոցիալիստական շինարարության հերոսներին ու լուսաբանելով նրանց աշխատանքի

փորձը: Այդ զրույցները շաղկապում են առանց կարգապահական զանցանքների, ստորաբաժանման ու զորամասի համար մարտական պատրաստության բարձր ցուցանիշների մղած պայքարի կոնկրետ խնդիրների հետ: Այսպես՝ բջիջը սոցիալիստական շինարարության մեջ բանվոր դասակարգի հերոսության բազմաթիվ փաստերով դաստիարակում է կարմիր բանակայինների մեջ բոլշևիկյան պատասխանատվության զգացմունք ստորաբաժանման ու զորամասի ամրության և որինակելիության համար:

— Հետաքրքիր մի փորձի մասին հաղորդակից է դարձնում մեզ 30-րդ հրետանդի 2-րդ մարտկոցի բջիջի քարտուղարը: «Մենք,—ասում է նա,—ամրացրինք ամենից առաջավոր կոմյերիտ-հարվածայիններին անկարգապահ կարմիր բանակայիններին: Կատարված աշխատանքի ու ցույց տված ոգնության հետևանքով շատ կարմիր բանակայիններ ուղղվեցին և զանցանքներ չեն գործում: Որինակ՝ ընկ. Պչենիչնին,—անկարգապահ կարմիր բանակայիններից մեկը,—ուներ համարյա բաժնյակի բոլոր տույժերի կեսը: Նրան անուղղելի էյին համարում: Բաժնյակի կոմյերիտական կոնֆերանսի որն ամբողջ բջիջը կանչեց Պչենիչնուն մրցակցության և նրա հետ կնքեց պայմանագիր: Ներկայումս Պչենիչնին ուղղվել է և ամենակարգապահ կարմիր բանակայիններից մեկն է»:

«Մարատ» գծանավի ա-1 կոմյերիտական բջիջը 4 ամսվա ընթացքում չունի իր անդամների մեջ կարգապահական վոչ մի զանցանք: Խոսքը տանք ընկ. Ագուրենկինին,—կոմյերիտական բջիջի քարտուղարին...

— Անհնար է մարտնչել կոմյերիտականների որինակելիության համար, յերբ չես ճանաչում նրանց: Յես ամենից առաջ սկսեցի ուսումնասիրել յուրաքանչյուր կոմյերիտականի, նրա տրամադրությունները: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն տվեց յենթադրել, թե ումից կարելի յե սպասել զանցանքներ:

— Բջիջում ծավալեցինք դաստիարակչական մեծ աշխատանք: Բոլոր կոմյերիտականներին ներգրավեցինք միութենական լուսավորության դպրոցները, հետևեցինք ուսուցման վորակին, թույլերին ամրացրինք ուժեղներ:

— Բոլոր կոմյերիտականներին բեռնավորեցինք աշխատանքով,— մինչդեռ առաջ մեզ մոտ կային շատ այսպես կոչված «գործապուրկներ», վորոնց հաշվին գլխավորապես առաջանում էյին զանցանքները: Ներկայումս նրանք բոլորն էլ աշխատում են: Որինակ՝ ընկ. Սինիցինը առաջ սիստեմատաբար խախտում էր կարգապահությունը, այժմ նա աշխատում է կարմիր սեղանի մոտ, կազմակերպում է բարձր ընթերցումներ և 5 ամսվա ընթացքում չունի զանցանքներ:



— Ամեն անգամ ափ իջնելուց առաջ բջիջը հիշեցնում է կոմյերիտականներին, թե ինչպես իրենց պետք է պահեն ափի վրա, ապահովում Կարմիր Բանակի Տան ու բազայի ակումբի տոմսերով:

—Զանցանքների բացակայությունը բացատրվում է ամենից առաջ նրանով, վոր կուսբջիջը կոնկրետ ղեկավարություն է ցույց տալիս կոմսոմոլին: Կուսկորգն ակտիվ ոգնում է կոմյերիտական աշխատանքին:

— Կուսբջիջի նախագահությունում պարբերաբար լսվում են կուսակցության մեջ յեղած կոմյերիտականների զեկուցումները կոմսոմոլին նրանց կատարած աշխատանքի մասին:

— Մեծ ոգնություն է ցույց տալիս խմբի հրամատար-ընկ. Լոմակինը: Նա ամեն որ լինում է կուբրիկում (նավասենյակում), հետաքրքրվում է յուրաքանչյուր մանրամասնությամբ, ընթերցումներ ու զրույցներ է տանում կարմիր նավաստայինների հետ: —«Նրանից հետո յերբ մենք բարելավեցինք դաստիարակչական աշխատանքը, մեզանում զգալիորեն ամրացավ զինվորական կարգապահությունը», —ասում է ընկ. Լոմակինը:

## ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲՋԻՋՆԵՐ

Վորպես կանոն, այն բջիջները (ստորաբաժանումները), վորոնք իրենց կազմի մեջ չունեն զանցանքներ, առաջատար են հանդիսանում նաև մարտական ու քաղաքական մնացած հարցերից: Բերենք այդպիսի յերկու բջիջի որինակ՝ Մոսկվայի հետևակային հրաձիգ դիվիզիայի հրետանդի 1-ին բաժնյակի վարչության կոմյերիտ բջիջն իր անդամների մեջ չունի կարգապահական զանցանքներ: Բջիջը բոլշևիկորեն ոգնում է հրամատարությանը մարտական ու քաղաքական պատրաստության մեջ մանավանդ ղեկավարության հարցերում: Բոլոր կոմյերիտականները ընդգրկված են սոցմրցակցությամբ ու հարվածայնությամբ: Բջիջի բոլոր անդամները քանիցս արժանացել են հրամատարական մրցանակներին: Բջիջում չկան այդ պարապմունքներից թույլ յուրացնողներ: Կոմյերիտականները հանդիսանում են մասնագիտական ծառայության (հեռախոսության, կապ) առաջավորները: Վերջին դաշտային պարապմունքում կոմյերիտականներից շատերը շնորհակալություն ստացան հեռախոսության գերազանց աշխատանքի և անմերժում կապի համար:

Ղեկավարության բջիջը ներկայումս ունի 22 կոմյերիտական: 2-3 ամիս առաջ այդ թիվը յերկու անգամ ավելի պակաս էր: Ներկայումս բջիջը հատուկ ուշադրություն է դարձնում յերիտասարդ

անդամների ամրացման ու նրանց մարքսիստական—լենինյան դաստիարակության վրա: Բոլոր կոմյերիտականները պարապում են միութենական դպրոցներում, պատրաստվում են պարապմունքներին, մրցակցում են լավագույն ինքնապատրաստության համար, միանգամայն բավարար ձևով յուրացնում են ծրագիրը:

Կարգապահության մեջ հաջողությունները բջիջը ձեռք է բերել շնորհիվ կարգապահական զանցանքների կանխման աշխատանքի: Բջիջը չի սպասում, մինչև վոր կոմյերիտականը զանցանք կատարի: Նա միշտ մոբիլիզացիայի յի յենթարկում մասսաներին բարձր կարգապահության և իսկական օրինակելիության համար:

Բջիջը գործարար ձևով զբաղվում է տեխնիկայի պրոպագանդով և ակտիվ մասնակցում է մասսայական քաղաքական ագիտացիային: Վոչ մի կարևոր քաղաքական անցք անուշադրության չի մատնվում բջիջի կողմից:

Բջիջն ունի նախագահության չուրջն ամուր համախմբված ակտիվ: Յուրաքանչյուր կոմյերիտական օրինակելիորեն կատարում է բեռնավորումը: Նախագահությունն իրագործում է կատարման առօրյա ստուգումը:

Կոմյերիտական բջիջի հաջողությունները ձեռք են բերված շնորհիվ կուսբջիջի ու նրա քարտուղարի լավ ղեկավարության:

Ուղեկցային գումարտակի (Մերձվոլգյան ռազմ. շրջան) 2-րդ վաշտի կոմսոմոլի բջիջը վեց ամսվա ընթացքում չունի կարգապահական վոչ մի խախտում: 2-րդ վաշտի բջիջը առաջատարն է գումարտակում: Գումարտակային բյուրոն ներկայումս փոխանցում է աշխատանքի իր փորձը բոլոր բջիջներին: Նա կարողացել է ձեռք բերել կոմյերիտականների օրինակելիություն և կազմակերպիչ դեր մարտական ու քաղաքական պատրաստության բոլոր տեղամասերը: 36 կոմյերիտականներ հրամանատարությունից ունեն 37 խրախուսանք: Օրինակելի յեն կոմերիտականները նաև քաղպարապմունքներում,— բոլորն էլ ունեն վոչ պակաս, քան «լավ» թվանշան: Բոլոր կոմյերիտականները կանոնավոր հաճախում են կուսակցական ու միութենական լուսավորության դպրոցները: Բջիջն ամեն որ ստուգում է կոմյերիտականների ինքնապատրաստության ու հառաջադիմության վորակը դպրոցում, պահանջում է վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտական ունենա իր ձեռքում սոցիալիստական մրցակցության անհատական պայմանագիր: Լենանկյունում ամեն որ լինում են հերթապահ կոմյերիտականներ, վորոնք թերթերի, ամսագրերի բարձր ընթերցումներ են կատարում: Բջիջն այդ բնագավառում ստույգ ձևով բաշխել է ուժերը.—ջոկված են գրատարներ, զվարճություն-



ներ ու մասսայական աշխատանքի կազմակերպողներ՝ յերթում: Հրացաններով վերջին հրաձգություններում կոմյերիտականները ավել են 85 տոկոս կատարում: Բոլոր կոմյերիտականները «բավարար» ուսումնասիրել են զենքի նյութական մասը: Ուղեկցային (կոնվոյնի) ծառայությունը կոմյերիտականները կատարում են օրինակելիորեն: 3 ամսվա ընթացքում բջիջն աճել է 35 հոգով: Ընդունվածների 50 տոկոսը բանվորներ են, մնացածը՝ բատրակներ, կոլտնտեսականներ, վորոնք ստուգված են հասարակական աշխատանքներում: Բջիջը զբաղվել է 17-րդ կուսկոնֆերանսի վորոշումների խոր մշակումով: Անց է կացվում բացատրական մեծ աշխատանք միջազգային անցքերի և մասնավորապես Հեռավոր Արևելքում տեղի ունեցող անցքերի մասին:

## ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՊԱՀԱՆՋԿՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Առանց կարգապահական զանցանքների ստորաբաժանման համար մղած պայքարում կան նաև խեղաթյուրումներ. փորձեր են լինում այդ խնդիրը լուծել ի հաշիվ պահանջկոտության իջեցման, թաքցնել զանցանքները և այլն:

№ գումարտակում կոմյերիտական բջիջի քարտուղարը խնդրում է դասակի հրամանատարին յետ վերցնել մի կոմյերիտականի վրա դրած տույժը, պատճառաբանելով նրանով, թե բջիջը մի քանի ամսվա ընթացքում չունի իր անդամների մեջ կարգապահական զանցանքներ և վոր տված տույժը հնարավորություն չի տալիս բջիջի վերընտրություններին գալու առանց կարգապահական զանցանքների (Բելոռուսիայի ռազմական շրջան): Այդ յերևույթների դեմ պետք է պայքարել ամենավճռական ձևով:

Կոմյերիտական շարքում կարգապահական զանցանքների լիակատար վերացման համար մղվող պայքարը, առանց կարգապահական զանցանքների ստորաբաժանման ու զորամասի համար պայքարը պետք է ընթանա պահանջկոտության բարձրացման և դաստիարակչական աշխատանքի ուժեղացման հիման վրա: Հարկավոր է հասնել կարգապահության այնպիսի վորակի, վորն ապահովի յուրաքանչյուր կոմյերիտականի իսկական բարձր օրինակելիությունը մարտական ու քաղաքական պատրաստության՝ առանց բացառության բոլոր բնագավառներում:

# ՊԱՅՔԱՐ ՄԱՐՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ

*«Բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային: Տեխնիկան վերակառուցման շրջանում վճռում է ամեն ինչ»: (Ստալին):*

*«Մեր դեմ հարձակմանը մենք պատրաստ ենք հակադրել մեր յերկաթե բարձրորակ վարժված, քաղաքականապես տոկուն, լավ զինված բոլշևիկյան բանակը» (Վորոշիլով):*

1931–32 թվի ձմրանը մենք քիչ չունեցինք այնպիսի կազմակերպություններ, վորտեղ մարտական պատրաստությունը, տեխնիկայի տիրապետումը դարձել են իրոք ամբողջ միութենական աշխատանքի առանցքը: Այդ կազմակերպությունները բոլշևիկորեն ձեռնամուխ են յեղել բանակային կոմսոմոլի հիմնական խնդրի կատարման. ավելի լավ ուսումնասիրել ռազմական գործը, ավելի լավ տիրապետել յեղած ու բանակ յեկող մարտական տեխնիկային, վորպեսզի գալիք պատերազմում, վորի վտանգն ավելի ու ավելի մոտ և անմիջորեն է դառնում, իմպերիալիզմի դեմ դուրս գանք ամբողջ սպառազինությամբ և ապահովենք սոցիալիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում:

Բերենք կոմսոմոլի բոլշևիկյան գործի օրինակներ տեխնիկայի տիրապետման համար մղած պայքարում: Կոմյերիտական բջիջները պետք է հավասարվեն այդ օրինակներով, բազմապատկեն այդ օրինակները, հարստացնեն կուտակված փորձը, տեխնիկայի տիրապետման համար ակտիվ պայքարի մեջ քաշեն մարտիկների ավելի ու ավելի լայն խավերին և այդպիսով իսկ ավելի ու ավելի բարձրացնեն կարմիր բանակում կոմսոմոլի փառահեղ պատասխանատու դերը:

## ԿՐԱԿԵԼ ԼԱՎ ՈՒ ԳԵՐԱԶԱՆՑ

Կոմյերիտականների հրաձգային պատրաստությունը բարձր է: 1932 թվի հրաձգությունների կուրսի 1-ին խնդիրը հրացաններով կատարել է 32 տոկոսը, գնդացրերով 100 տոկոսը: Այդ արդյունքները մենք ձեռք ենք բերել շնորհիվ այն օգնության, վոր ցույց է տրված յետ մնացող հրաձիգներին: Ուսումնասիրված են յետ մնացողների թերությունները: Յետ մնացողների հետ տարվել են առանձին պարապմունքներ արտադպրոցական ժամերին, կրակել են դասարանային հրաձգարանում: Ֆիզպատրաստությունը կառուցված է այնպիսի հաշվով, վոր վերացվեն առանձին թերությունները,— կոթն ուսին դեմ տալը, նշանառությունը և այլն: Ֆիզպատրաստությամբ ընդգրկված են բոլոր կոմյերիտականները (135-րդ հրաձիգ գունդ):



Սլավյանսկի ու 221-րդ Նովորոսիյսկի գնդերի կոմյերիտականները, 2-րդ գնդի 2-րդ վաշտի, 32-րդ հրաձիգ գնդի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, և 9-րդ վաշտերի կոմերիտականները 32 թվի հրաձգությունների կուրսի 1-ին խնդիրը հրացանով կատարել են 100 տոկոսով:

Ընկ. Ժելոբովը Կարմիր բանակ է յեկել համարյա անգրագետ: Նրան նշանակեցին 32-րդ հրաձիգ գնդի 7-րդ վաշտը: Նա իրեն նպատակ դրեց լինել առաջավոր մարտիկ: Նրա առաջին քայլն այն յեղավ, վոր մտավ կոմսոմոլի շարքերը: Բջիջը քննեց նրա դիմումը և վորոշեց ընդունել: Մի ամիս անց բջիջի նախագահությունը լսեց նրա անհատական հաշվետվությունը: Ժելոբովին հարցեր տվեցին. հարցրին նաև այն մասին, թե ինչպես է նա կրակում:

— Վոչինչ,— պատասխանեց Ժելոբովը:

— «Վոչինչ»,— այդ խոսքն առաձգական է, դու գիտես, վոր մեր կոմյերիտական բջիջն ամենից լավ է կրակում գնդում: Մեզանում բոլոր կոմյերիտականները գերազանց հրաձիգներ են: Դու պետք է սովորես կրակել ավելի լավ. դու պետք է դառնաս գերազանց հրաձիգ, սնայպեր:

Շատ աշխատանք ու ջանք գործ դրեց ընկ. Ժելոբովը բարձրացնելու համար իր հրաձգային պատրաստությունը: Իր ամբողջ ազատ ժամանակը նա նվիրում էր մարզանքին: Բջիջն ամրացրեց նրան մի կոմյերիտականի,— կրտսեր հրամանատար ընկ. Գորոխովին,— օգնության համար: Աշխատանքն իզուր չկորավ: Ընկ. Ժելոբովը կատարեց բջիջի նակազը: Նա դարձավ սնայպեր:

Այժմ Ժելոբովը հին ծառայության մարտիկ է: Գերազանց հրաձգության ու ռազմական գործը լավ իմանալու համար ընկ. Ժելոբովը նշանակվել է ջոկի հրամատար:

## ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ—ԲՈԼՈՐ ԲՋԻՋՆԵՐԻՆ

Մասսայական աշխատանքի ձևերի միջոցով ճիշտ կազմակերպված հրաձգային պատրաստությունը զգալիորեն հեշտացնում է հրաձգությունների կուրսի հաջող անցումը:

Բերենք 45, 13, 11 և 5-րդ հրաձիգ դիվիզիաների լավագույն կոմյերիտական բջիջների փորձը:

— Լայնորեն ոգտագործվում է լավագույն զորաբաժանումների ու գերազանց հրաձիգների փորձը, տարվում են առանձին հրաձիգների զրույցներ թույլերի հետ։

— Կազմակերպված են խմբակներ՝ ուսումնասիրելու համար 32 հրաձգային կուրսը, գլխավոր ուշադրությունը նվիրվում է յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրաձգության արվեստի տիրապետման մեթոդներին։

— Աշխատանքն սկզբից մինչև վերջ ընդգրկված է սոցիալիստական մրցակցությամբ։

— Մեծ ուշադրություն է նվիրվում հրաձգության մարզանքին։ Մարզանք, կոթն ուսին դեմ տալը, նշանառությունը, հրահանի իջեցումը կոմյերիտականի մշտական զբաղմունքն են։

— Անց են կացվում հրաձգային ցերեկույթներ, կոնկուրսներ, մրցություններ, անհատական մրցականչեր, զրույցներ հրաձգային գործի առթիվ։

— Բջիջը հրամանատարների միջոցով տեղեկանում է յուրաքանչյուր կոմյերիտականի հրաձգությունների արդյունքների մասին, պարզում է հրաձգության չկատարման պատճառները, կազմակերպում է յետ մնացողների օգնությունը, յետ մնացողներին ամրացնում է լավագույն հրաձիգների, կազմակերպում է հասարակական բուքսիր։

— Հրաձգային գործից չհաջողվող կոմյերիտականները հաշվի յեն առնում այդ ազատ ժամանակի բաշխման ժամանակը և ժամեր են հատկացնում հրաձգային գործի համար։

— Օգնություն ցույց տալու հետ միասին վճռական պայքար է մղվում նրանց դեմ, վորոնք խուսափում են պարապմունքներից և չարամտորեն չեն կամենում կատարելագործել իրենց հրաձգային պատրաստությունը։

— Դեպի զենքը ցույց տված անխնամ վերաբերմունքի յուրաքանչյուր դեպք վճռական դատապարտություն է գտնում մարտիկների ամբողջ մասսայի կողմից։

— Լայն ծավալված է գյուտարարական ու ռացիոնալացման աշխատանքը հրաձգային գծի շուրջը։

— Կոմյերիտական ժողովներում պարբերաբար լսվում են հրամանատարների զեկուցումները հրաձգային պատրաստության մասին։

— Լավագույն հրաձիգները մրցանակներ են ստանում, մասսայականացվում են ժողովի, թերթի, լենանկյան միջոցով։

— Ցուցադրական պրոպագանդով, բազմատիրաժներով, [illegible] լուսաբանվում է առանձին կոմյերիտականների ու ամբողջ վաշտի դրությունն ու ընթացքը։



— Յուրաքանչյուր մարտիկ գիտե՝ վոչ միայն ինչպես է կրակում իր վաշտը, այլև մնացած վաշտերը գնդում։

— Հրաձգության գնալիս կոմյերիտականները գիտեն հրաձգային վարժության ճիշտ պայմանները և իրենց սխալները նախընթաց հրաձգություններում։ Կոմյերիտականները մասնակցում են ակումբին կից հրաձգային խմբակներում։

— Մասսայական աշխատանքով լայն չափով ընդգրկված են վոչ միայն կոմունիստներն ու կոմյերիտականները, այլև անկուսակցականները։

Այս տարի ԲԳԿԲ կոմսոմոլն իր կոնֆերանսներում պարտավորություն է ընդունել.—չպետք է լինի վոչ մի կոմյերիտական, վորը չկատարի 32 թվի հրաձգությունների կուրսի պահանջները։ Այդ պարտավորությունները պետք է կատարել ինչ էլ վոր լինի։ Գործը պետք է լինի՝ դառնալ գերազանց հրաձիգ։

«Միայն այն մարտիկը, վորը կատարելապես կտիրապետի իրեն տրված տեխնիկային, զենքին և կկարողանա ճիշտ, առավելագույն արդյունքով ոգտվել նրանից մարտում, կկարողանա կատարել պրոլետարական դիկտատուրայի պաշտպանի իր պարտքը» (Գամարնիկ)։

## ԽՆԱՄԵԼ ՏԵԽՆԻԿԱՆ

Սուզանավի վրա կա մի գործիք, վորը գիրոսկոպիկ կողմնացույց է կոչվում։ Այդ գործիքը բարդ է և պահանջում է ամենահոգատար խնամք։ Կոմյերիտական Կուզինը տիրապետեց այդ բարդ տեխնիկային իսկական կոմյերիտական համառությամբ։ Նա ճիշտ կատարում է խնամքի բոլոր կանոնները։

Այդ կողմնացույցը վարձատրում է նրան ճիշտ աշխատանքով. սուզանավը ջրի խորքերում ընթանում է վստահորեն անհրաժեշտ ուղղությամբ։

[redacted] եսկադրիլյային ականանավի վրա ջրհան մեքենայի մոտ կանգնած է հուսալի տեր, կոմյերիտական—հնոցապան Լինկովը։ Ջրհան մեքենայի մասերը փայլում են։ Լինկովն ամեն առավոտ իսկ աշխատանքի ժամանակ ամեն կես ժամը մեկ ստուգում է մեքենայի մասերը։ Յերբ նա աշխատանքում խափանումներ է գտնում, անմիջապես թարմ յուղ է ավելացնում, փոքրացնում է պտույտների թիվը։

«Կարլ Լիբկնեխտ» ականանավի վրա № 2 հրանոթի մոտ է կոմյերիտական-ավագ կոմենդոր Սոկոլովը։ Նա ուսումնասիրեց իր հրանոթի յուրաքանչյուր պտուտակը և սովորեց աշխատել նոր ձևով։

թե առաջ թնդանոթը կրակում էր սահմանված մարտադաշտի 70 տոկոսը, 1931 թվի կամպանիային արդեն կրակում էր առանց խափանումների և լրիվին արձակում էր ամբողջ մարտադաշտը: Շնորհիվ ընկ. Սոկոլովի մեծ հոգատարության, թնդանոթը կանոնավոր զննում են, սրբում բոլոր մեխանիզմները, ժամանակին յուղում: Բոլոր յուղամանները միշտ էլ լիքն են: Բոլոր պտուտակներն ամրացված, համաձայն հաշվարկների:

## ԱՆՎԹԱՐ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐ

Ավտոմատում (Ուկրաինայի ապամական շրջան) կոմյերիտական մեքենավարները չունեն վոչ մի վթարում 7 ամսվա ընթացքում:

Հարվածային-կոմյերիտականները բազմատիրաժի էջերում պատմում են այն մասին, թե ինչպես են նրանք պայքարում անվթարության համար:

— Ցես շոֆեր մեքենավար եմ առանց վորևե վթարման: Ցես դրան հասել եմ համառ պայքար մղելով մեքենայի սարքինության համար: Ցես ամեն որ ստուգում եմ իմ մեքենայի բոլոր առանձին մեխանիզմների սարքինությունը: Իսկ վոր գլխավորն է, մեքենայի շարժման ժամանակ յես հիշում եմ սահմանված կանոնների մասին: Այդ իմ փորձը տալիս եմ յերիտասարդ մեքենավարներին, վորոնց յես սովորեցնում եմ: (Ջերնյակ, ՀամԼԿՑԵՄ անդամ, 1929 թվից):

— Շուտով մի տարի չի, ինչ ինձ հանձնել են մեքենա,— այդ այնքան էլ մեծ ժամանակ չէ, բայց յես արդեն վարժվել եմ պահպանել մեքենաս աչքիս լույսի պես: Ամեն որ յերիտասարդ մարտիկների հետ գործնական շրջագայության մեկնելիս, յես խնամքով ստուգում եմ մեքենայիս դրությունը, ինչպես նաև շրջագայությունից վերադառնալուց հետո յես մեքենաս լվանում եմ, մաքրում եմ, ստուգում եմ սարքինությունը, յուղում եմ սահմանված ժամկետներին: Ամբողջ ժամանակվա ընթացքում յես չեմ գործել վոչ մի վթարում: Ես պարծենում եմ նրանով, վոր ձեռք եմ բերել ինձ վստահած մարտական տեխնիկայի որինակելի խնամում (Գոլուբ, ՀամԼԿՑԵՄ անդամ 1925 թվից):

— Ցես հասել եմ մեքենայի որինակելի տիրապետման և իմ գիտելիքները փոխանցում եմ նորեկ մարտիկներին: Դրան յես հասել եմ մեքենայի համառ ամենորյա ուսումնասիրությամբ: Ցես ժամանակի վրա ուշադրություն չեմ դարձրել, միշտ էլ համառորեն աշխատում եմ տեխնիկայի ուսումնասիրությամբ, հաճախ դրան նվիրում եմ նաև հանգստի ժամերը: Ցես մեքենայիս տիրապետել եմ լավ ու վթարումներ չունեմ: Ցես մրցակցության եմ կանչել 3-րդ



վաշտի շոֆերներին (Շորկին, ՀամԼԿՑԵՄ անդամ 1930 թվից):

— Կոմյերիտական բժիշկ քարտուղար ընկ. Բիզմանն իր մեքենան վարում է որինակելիորեն: Բանակում յեղած ամբողջ ժամանակամիջոցում ընկեր Բիզմանը չունի վոչ մի վթարում, վոչ մի ջարդվածք և մինչև անգամ մեքենայի թևերի վրա վոչ մի ճանկռվածք: Ընկ. Բիզմանն իր մասին պատմում է. «Հենց սկզբից յես ինձ նպատակ դրեցի լինել լավ մեքենավար: Դեռ այն ժամանակ, յերբ յես միայն մեքենաներ լվանալու էյի գնում, մեքենայի յուրաքանչյուր պտուտակ հետաքրքրում էր ինձ և հարցերի տարափ էյի տեղում շոֆերների գլխին: Միայն գրքին յես չէյի վստահանում, կարդում էյի և ապա հարցնում, ստուգում կարդացածս»:

## ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

«Մարտ» գծանավի վերանորոգումն ավարտվեց ապրիլի 1-ին: Անձնական կազմին հրամանատարության տված առաջադրությունը կատարվեց ժամանակին: Կոմյերիտականները ցույց տվեցին վերանորոգման հարվածային աշխատանքի բայլշևիկյան որինակներ:

— Կոմյերիտական Ջամխլովսկին, բացի իրեն հանձնարարված վերանորոգումից, վերանորոգեց հնոցի գլխավոր ու միջին մեքենաների ու սառցարանների լուսավորությունը: Նա հաճախ աշխատում էր ուշ գիշերով:

— Կոմյերիտական-ավագ էլեկտրիկ Կաչկովը բացի իր հանձնարարությունից, վերանորոգեց վենտիլյացիան ու 1-ին կայանը:

— Կոմյերիտական Սերեբրյակովը կորպուսի լարացանցը դարձրեց զենքի էներգետիկի կոմուտատորը և փոխեց փողկապները: Այդ աշխատանքի համար նախատեսված էր 24 ժամ ժամկետ, իսկ նա կատարեց 12 ժամում:

— Կոմյերիտական Շեչենկոն քանդեց, մաքրեց ու հավաքեց մեքենայական վենտիլյատորը նախատեսված 48 ժամի փոխարեն 12 ժամում:

— Կոմյերիտական Գավրիլովը կափույրների (կլապանների) հղկումը փոխանակ 15 ժամվա, կատարեց 12 ժամում: Մեքենայական կոմպրեսորի քանդելն ու հավաքելը կատարեց փոխանակ 12 ժամվա, 9 ժամում:

—Աշտարակի աշ. Կոլոսովի ղեկավարությամբ կոմյերիտականներ՝ Կրասավինի, Կաշմենկոս, Բոտվինի Դոլգովի, ու Զայցեւի խմբակը աշտարակի գնդերի վերանորոգումը կատարեց 4 աշխորում, փոխանակ պլանով նախատեսված 9 որվա:

— Նավի վերանորոգման ամբողջ աշխատանքը կատարվում էր

լայն ծավալված սոցմրցակցության ու հարվածայնության հիման վրա։

—№ դիվիզիայում ավտոարհեստանոցի կոմյերիտականները մեքենաների վերանորոգման մեծ աշխատանք կատարեցին։ Ուժեղները վերցրին թույլերի չեֆությունը։ Լայն ծավալված էր սոցմրցակցությունն ու հարվածայնությունը հետևյալ լոզունգներով՝ «Արհեստանոցի հանցանքով ոչ մի կրկնավերանորոգում»։ Եվ արդյունքը յեղավ այն, որ 13 մեքենայի փոխարեն, որ նախատեսել էր հրամանատարությունը, վերանորոգվեց 21 մեքենա։ Բարելավվեց մեքենաների վերանորոգումը։ Արհեստանոցի հանցանքով չկա կրկնավերանորոգում։

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ

— № գնդում կա 29 տեխնիկական խմբակ։ Բոլոր կոմյերիտականներն ընդգրկված են խմբակներով։ Կոմյերիտական բջիջները սիստեմատիկաբար ստուգում են կոմյերիտականների կողմից պարապմունքների հաճախելիությունն ու յուրացումը։ Հաճախելիությունը կանոնավոր է։ Պարապմունքները տարվում են արտադպրոցական ժամանակ շաբաթը մեկ անգամ։ Հրամանատարությունը ճամբար դուրս գալուց առաջ խնդիր էր առաջադրել, որ մորզիստն ապարատի վրա տա ոչ պակաս, քան 180 բառ։ Վերջին դաշտային պարապմունքում մորզիստները տվեցին 225 բառ։ Դրան ոչնեցին խմբակներում տարվող պարապմունքները։ Բացի դրանից, տեխնիկական խմբակներն իրենց նպատակ են դրել բարձրացնել մորզիստի որակը — պատրաստել նրան ավելի բարդ ապարատների վրա աշխատելու համար, խմբակներում տարվող համառ աշխատանքի հետևանքով շատ մորզիստներ հաջողությամբ տիրապետեցին Յուզս և Շորինի ապարատին։

— Լենինգրադի ռազմական շրջանում կոմյերիտականներն ու կարմիր բանակայինների հիմնական մասսան ընդգրկված է տեխնիկական խմբակների ցանցով։ Խմբակներ աշխատում են որոշ ծրագրով գործի յուրաքանչյուր տեսակի համար առանձին, որով, նախատեսվում է ուսումնասիրել այն առարկաները, որոնք չեն կարող յուրացվել ծառայության ժամանակ։

—45-րդ դիվիզիայում խմբակների սիստեմատիկ պարապմունքների հետևանքով 92 կոմյերիտական (այլ մասնագիտությունների մարտիկներ) գիտեն մորզը։ Կապի դասակի բջիջը հասել է ինքնափոխարինման. չոֆերին փոխարինում է ռադիստը, ռադիստին չոֆերը. մոտոցիկլետիստը՝ չոֆերին, չոֆերը՝ մոտոցիկլետիստին։



— Ռադիոմասերում (Հյուսիսային Կովկասի ռազմական շրջան) կազմակերպված են յերեք տեխնիկական խմբակ՝ ուսումնասիրելու համար ավտոմոտորը, կարճ ալիքներ և ռադիոմոնտաժները։ Կոմյերիտական կոլեկտիվի բյուրոն պարբերաբար լսում է խմբակային ավանդների զեկուցումները։ Կոմյերիտական ակտիվի լավագույն ուժերը մասնակցում են խմբակներում և օգնում են յետ մնացողներին։

## ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ՈՒ ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Տեխնիկայի տիրապետման համար մղած պայքարում կոմսոմոլի հաջողության հետ միասին լայն ծավալված սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության հիման վրա խտանում են կոմյերիտական ռացիոնալիզատորների ու գյուտարարների շարքերը։

— Կոմյերիտական Գոլուբևը (45-րդ հրաձիգ դիվիզա) առաջարկել է շարժվող նշանների հրանոթով հրաձգության համար գործիքի նախագիծ։

— Կոմյերիտական Բրովչենկոն առաջարկել է կալյասկայով մոտոցիկլետի վրա գնդացրի ամրացման գծանկար։

— Կոմյերիտական զենփոքրապետ Կրիվցունովը հնարել է կոնքի համար մեխանիկական կոճ։ Կրիվցունովի գյուտը շատ մեծ չափով հեշտացնում է ուղաչվական կազմի աշխատանքները, որովհետև բավական է սեղմել կոճակը և կոճը մեխանիկորեն բացում է կոնը։ Կոմյերիտականները կատարելագործել են այլվերը, որը հնարավորություն է տալիս ավելի արագ բենզին լցնել մոտորի մեջ։

— Կոմյերիտական Զերոնկովը հնարել է էլեկտրոդողման ապարատ և այժմ աշխատում է տոկարի հաստոցի կատարելագործման վրա։

— Կոմյերիտական Ալեքսեևը կառուցել է կարճալիք շարժական ռադիոկայան, որը փորձի ժամանակ տվեց լավ արդյունք ռադիոգրամների ընդունելության ու փոխանցման գործում։ Այդ ռադիոկայանը կարող է տեղափոխել մի մարտիկ։

— Կոմյերիտականներ Բարկինն ու Դուբինինը կազմել են ռադիոկայանների էլեկտրիֆիկացված սխեմա։

— Կոմյերիտական Կիլկիլոն գտել է մի միջոց, որը պահպանում է հակագազի ապակիները քրտնելուց։ (Հյուսիսային Կովկասի ռազմական շրջան)։

## ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՏՐԵՐ

Կապի № գնդում յուրաքանչյուր կարմիր բանակային ունի տետր, ուր գրի յե առված թե ինչ է ապարատը, ինչ զենք է ամրացված նրա վրա։ Ջոկի հրամանատարը կամ դասակի հրամանատարի տեղակալը սիստեմատիկաբար ստուգում է տեխնիկայի դրությունը և տետրում նշում է կատարում այն մասին, թե ինչ դրության մեջ է գտնվում կարմիր բանակայիններին մոտ գտնվող ապարատը կամ զենքը։ Բջիջի քարտուղարը հրամանատարի թույլտվությամբ պարբերաբար դիտում է կոմյերիտականների տետրերը։ Այդպիսով բջիջը տեղեկանում է կոմյերիտականների տեխնիկայի դրության մասին և տեղնուտեղը ստուգում է սոցպայմանագրերի կատարումը։ Դրա արդյունքը յեղավ այն, վոր չկա վոչ մի դեպք, վոր կոմյերիտականի զենքը վատ դրության մեջ լինի, մինչդեռ անցյալ տարի յեղել է այդպիսի 16 դեպք։

## ԽՆԴԻՐՆԵՐԸ

Իրագործելով ընկ. Ստալինի լոզունգը, վոր «Բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային», բանակի կոմյերիտականները պարտավոր են կատարելապես տիրապետել մարտական տեխնիկային, խնամքով վերաբերվել նրա հետ և այդ տեսակետից պետք է օրինակ ծառայեն բոլոր մարտիկների համար։

Անհրաժեշտ է.—

—Ներգրավել բոլոր կոմյերիտականներին տեխնիկական խմբակների մեջ, վոր կազմակերպված են զորամասերում, հասնել նրան, վոր յուրաքանչյուր կոմյերիտական ակտիվ մասնակցի այդ խմբակներում և գերազանցապես յուրացնի պարապմունքների ծրագիրը.

— Սիստեմատաբար ժողովներում լսել զեկուցումներ տեխնիկայի պահպանման ու յուրացման մասին, հասնել նրան, վոր յուրաքանչյուր բջիջ, յուրաքանչյուր կոմյերիտական ակտիվ մասնակցի այդ խնդրի պրակտիկ լուծման, ոգնություն ցույց տալով յետ մնացողներին, ամրացնելով նրանց ավելի ուժեղ կոմյերիտականների, ցույց տալով կատարման ժամկետները. վճռապես պայքարել դեպի տեխնիկան ցույց տված անփույթ վերաբերմունքի առանձին փաստերի դեմ։

—Ակտիվ մասնակցել տեխնիկայի պրոպագանդի մասսայական աշխատանքին, լայն չափով ոգտագործելով զանազան ձևերը, տեխնիկայի յերեկույթներ, տեխնիկական „մարտեր“, եքսկուրսիաներ



դեպի մասնագիտական մասերը, ցուցահանդեսներ, տեխնիկայի վերաբերյալ զրույցներ։

—Ակտիվացնել կոմսոմոլի մասնակցությունը ռացիոնալիզատորական ու գյուտարարական շարժման մեջ։

Յուրաքանչյուր կոմյերիտական ռացիոնալիզատոր ամեն կերպ աջակցում է մարտական տեխնիկայի կատարելագործմանը։ Կոմյերիտական բջիջները պետք է հաշվառման վերցնեն բոլոր կոմյերիտական ռացիոնալիզատորներին ու գյուտարարներին, ոգնություն ցույց տան նրանց ամենաարագ ձևով իրացնելու առաջարկները, լսել իրենց ժողովներում ռացիոնալիզատորների ու գյուտարարների զեկուցումներ, լայնորեն լուսաբանել ռացիոնալիզատորական աշխատանքը մամուլում։

Տեխնիկայի տիրապետման համար մղած պայքարում կոմսոմոլի ամբողջ աշխատանքը պետքե ուղղված լինի պետկազմին ու կուսկազմակերպություններին ցույց տված ակտիվ ոգնության։ Անհրաժեշտ է վերացնել մինչև այժմ գործադրվող աշխատանքի այնպիսի ձևեր, վորոնք իրենց եյությամբ փոխարինում են հրամանատարի դերը (կոմյերիտական բջիջների կողմից՝ ստուգելու համար տեխնիկայի ու զենքի դրությունը— կապի դպրոց ,44—րդ հրաձիգ դիվիզիա)։

Յուրաքանչյուր բջիջ, յուրաքանչյուր կոմյերիտական կազմակերպություն պետք է հասնի նրան, վոր կոմյերիտական ամբողջ մասսան տա բարձր ցուցանիշներ մարտական ուսման մեջ. այդ դեռ քիչ է, կոմյերիտականները պետք է ակտիվ ոգնություն ցույց տան անկուսակցական կարմիր բանակայիններին, հասցնեն իրենց մակարդակին բոլոր կարմիր բանակայիններին, որինակելի դարձնելով ամբողջ ստորաբաժանումը, ամբողջ զորամասը։

Կոմյերիտական բջիջները պետք է ուղղեն կոմյերիտականների այն ակտիվությունը, վոր առաջացել է տոմսերի փոխանակումից, լուծելու համար մարտական ու քաղաքական պատրաստության կարևորագույն խնդիրները, ոգնեն կոմսոմոլին կենսագործելու տոմսերի ստացման ժամանակ հանձն առած պարտականությունները, ամենից առաջ սահմանելով կատարման ամենորյա ստուգում։

Բարձր պահելով սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության դրոշը, կոմսոմոլը պետք է ել ավելի մեծ յեռանդով ու համառությամբ սիստեմատիկ պայքար մղեն կոմյերիտականների որինակելիության համար, առաջատար դերի համար կարգապահության մեջ մարտական պատրաստությունում, տեխնիկայի տիրապետման մեջ։ Կարգապահություն, մարտական պատրաստություն, տեխնիկայի տիրապետում յեղել են ու մնում են բա-

նակային կոմսոմոլի ամբողջ աշխատանքի առանցքը: Այդ խնդիրների կարևորությունն առանձնապես աճել է ներկայումս՝ պատերազմի ուժեղացող սպառնալիքի պայմաններում, բանակի տեխնիկական հագեցվածության հսկայա աճման հետևանքով:

Կոնկրետ պայքարելով առանց կարգապահական զանցանքների ստորաբաժանման ու զորամասի համար, յերկաթե հեղափոխական զինվորական կարգապահության պահանջների բոլոր որինակելի կատարման համար, մարտական ուսուցման մեջ լավ ու գերազանց ցուցանիշների համար, լենինյան կոմսոմոլի բանակային ջոկատը պետք է դառնա կուսակցական կազմակերպությունների ու պետկազմի ել ավելի ակտիվ ոգնականը՝ Կարմիր Բանակի մարտունակության ամեն կերպ ամրացման համար նրանց կատարած աշխատանքում:

---

Սրբագրիչներ՝ Հ. Սարիկյան, Ե. Հարությունյան

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 2744 Գլավլիտ 7619 (բ) Հրատ. 2341 Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 21 ոկտոմբերի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 25 նոյեմբերի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0191414

Գինը 30 կ.

Боевые задачи Комсомольского труда

Госиздат ССР Армении
Эривань 1932 г.